ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 785-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2011.06.22/38(841) Հոդ.894	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	10.06.2011
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	15.06.2011
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02.07.2011	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2011 թվականի N 785-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

(նախաբանը փոփ. 19.05.16 N 520-Ն)

1. Հաստատել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Տ. Սարգսյան

2011 թ. հունիսի 15
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 10-ի N 785-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների (այսուհետ՝ սարքավորումներ) փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սարքավորումների փորձաքննությունն անցկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական զանձարան» գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) դիմող իրավաբանական անձի (այսուհետ՝ կազմակերպություն) ներկայացուցչի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա ներկայացուցչի (ներկայացուցիչների) մասնակցությամբ:

(2-րդ կետը խմբ. 25.09.14 N 1060-Ն)

3. Սարքավորումների փորձաքննության աշխատանքներն իրականացվում են դիմումը գործակալություն մուտքագրվելու օրվան հաջորդող 23 աշխատանքային օրվա ընթացքում: Փորձաքննությունն անցկացվում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրում՝ նրա ղեկավարին կամ պաշտոնատար անձին փորձաքննության աշխատանքներն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տեղյակ պահելուց հետո:

(3-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)

4. Սարքավորումների փորձաքննության համար կազմակերպությունը գործակալության ներկայացուցչին (ներկայացուցիչներին) է ներկայացնում տվյալ արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական անձնագրերը, հարգորոշման ու հարգադրոշմման տեխնոլոգիական գործընթացը հաստատող փաստաթղթերը, կարգագրերը:

(4-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)

5. Սարքավորումների փորձաքննության համար գործակալությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել համապատասխան մասնագետներ:

(5-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)

6. Գործակալության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետները կարող են ուսումնասիրել սարքավորումներ, օժանդակ արտադրության միջոցներ և փաստաթղթեր:

(6-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)

7. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը՝ համաձայն ձևի, կազմում և ստորագրում է (են) գործակալության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետը (մասնագետները)՝ դրանց մասնակցության դեպքում: Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը կազմվում է 3 օրինակից, 2 օրինակը փորձաքննության ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում է գործակալության պետի կողմից և տրամադրվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտին, իսկ մեկ օրինակը՝ գործակալությանը:

(7-րդ կետը լրաց., փոփ. 25.09.14 N 1060-Ն)

8. Փորձաքննությանը մասնակցած մասնագետներից որևէ մեկի հատուկ կարծիքի առկայության դեպքում այն հավելվածի տեսքով կցվում է սարքավորումների փորձաքննության եզրակացությանը:

9. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը հաստատվում է գործակալության պետի կողմից՝ հետևյալ որոշումներից մեկի գրառմամբ՝

1) համապատասխանում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին.

2) չի համապատասխանում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

(9-րդ կետը փոփ. 25.09.14 N 1060-Ն)

10. Սարքավորումների փորձաքննության բացասական եզրակացության մեջ հստակ նշվում են այն սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացի անվանումները, որոնք չեն ապահովում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ նշելով համապատասխան իրավական ակտի դրույթները: Անհամապատասխանությունների վերացման դեպքում փորձաքննությունը կատարվում է ընդհանուր սկզբունքներով:

11. Փորձագիտական եզրակացության հետ չհամաձայնելու դեպքում տվյալ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է բողոքարկել վարչական կարգով՝ վերադասության սկզբունքով, ինչպես նաև դատական կարգով:

(կարգը խմբ., փոփ., լրաց. 25.09.14 N 1060-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Զև

Հաստատում եմ
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության «Թանկարժեք մետաղների և
թանկարժեք քարերի պետական գանձարան»
գործակալության պետ

_____
_____ _____ 20 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____ _____ 20 թ.

_____
(պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը)

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող
Սարքավորումների

Փորձաքննության արդյունքները

Կազմակերպության անվանումը _____
Սարքավորումները _____

_____
(համապատասխանում են կամ չեն համապատասխանում)

«Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ նշել հոդվածները և մասերը)

Փորձաքննության մասնակիցներ

Գործակալության ներկայացուցիչ (ներկայացուցիչներ) _____
_____(պաշտոնը,
անունը, ազգանունը, ստորագրությունը)
Հրավիրված մասնագետներ _____
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

(ձևը փոփ. 25.09.14 N 1060-Ն)
(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 25.09.14 N 1060-Ն)